ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- ՄԱՐՔԵԹԻՆԳ ԵՎ ՎԱՃԱՌՔՆԵՐ
- ՄԵՆԵՋՄԵՆԹ
- ՖԻՆԱՆՍՆԵՐ
- ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ
- ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԱՈՒԴԻՏ

ԵՐԵՎԱՆ 2017

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հետազոտության մասին..... 3

Աշխատաշուկայի ընդհանուր միտումները, կառուցվածքը եվ հիմնական պահանջները..... 7

Մարքեթինգի և վաճառքի մասնագետներին ներկայացվող հիմնական պահանջներն ու աշխատանքային պարտականությունները..... 14

Ֆինանսների բնագավառի մասնագետներին ներկայացվող հիմնական պահանջներն ու աշխատանքային պարտականությունները..... 26

Կառավարման բնագավառի մասնագետներին ներկայացվող հիմնական պահանջներն ու աշխատանքային պարտականությունները..... 37

Կառավարչական հաշվառման մասնագետներին ներկայացվող հիմնական պահանջներն ու աշխատանքային պարտականությունները..... 45

Հաշվապահական հաշվառման մասնագետներին ներկայացվող հիմնական պահանջներն ու աշխատանքային պարտականությունները..... 49

Հիմնական ընդհանրացումներ..... 57

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրումից հետո ստեղծվել է նոր իրավիճակ, որը բուհերին ստիպում է անընդհատաբար տեղեկացված լինել իրենց իրականացրած կրթական ծրագրերի մասնագիտական բնագավառի աշխատաշուկայի պահանջներին և դրանում ընթացող փոփոխություններին: Բանը նրանում է, ՀՀ կառավարության 22.12.2005թ. N 2307-Ն որոշման համաձայն («Հայաստանի հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին») Հայաստանյան բուհերին պատվիրակվել է, որ շնորհվող կրեդիտների ու որակավորումների ճանաչելիությունը և կրեդիտների կուտակման ու տեղափոխման եվրոպական համակարգի հետ (ECTS) դրանց համադրելիությունն ապահովելու նպատակով, պետք է մշակվեն նոր կրթական ծրագրեր, որոնց ուսումնական ծրագրերն ու դրանց բովանդակությունը կմերձեցվեն եվրոպական չափանիշներին, ինչպես նաև մասնագիտական աշխատանքային շուկայի առկա պահանջներին: Սա առնվազն ենթադրում է, որ բուհերը պարբերաբար պետք է իրականացնեն մասնագիտական կրթական ծրագրերի մատուցման միջազգային փորձի ուսումնասիրություններ (բենչմարքինգ), ինչպես նաև մասնագիտական աշխատանքային շուկայի համալիր հետազոտություններ: Ճիշտ է բուհերը մասնագիտական առարկայական ոլորտի ճանաչման նպատակով կարող են օգտվել նաև ՀՀ կամ միջազգային զբաղմունքների դասակարգիչներից, սակայն խնդիրը նրանում է, որ դրանք առավել երկար ժամանակահատվածի համար մշակվող դասակարգիչներ են և վերանայվում են ոչ շուտ քան 5 տարին մեկ անգամ: Բացի այդ, զբաղմունքների դասակարգիչները թեպետ ներառում են տեղեկատվություն այս կամ այն մասնագետի հիմնական աշխատանքային գործառույթների ու պարտականությունների վերաբերյալ, սակայն դրանք որևէ կերպ չեն լուսաբանում այդ մասնագետի իմացությանը

(գիտելիքներին, հմտություններին և կարողություններին) ներկայացվող պահանջները, որոնք սովորաբար ներկայացվում են գործատուների կողմից:

Ակնհայտ է, որ ներկայումս աշխատաշուկայի կարևորագույն բնութագրիչներից է մրցակցության սրումը, ինչպես նաև գործատուների կողմից պոտենցիալ աշխատակիցներին ներկայացվող պահանջների հետևողական խստացումը: Այս պայմաններում ՀՊՏՀ-ի՝ որպես Հայաստանում տնտեսագիտական կադրեր պատրաստող առաջատար բուհի առանցքային խնդիրներից է խորապես ճանաչել և պարբերաբար արձագանքել աշխատաշուկայի փոփոխություններին, վերանայել, փոփոխել, թարմացնել կրթական ծրագրերը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Հիմնականում հենց այս խնդիրը լուծելու նպատակով էլ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը նախաձեռնել է ՀՀ աշխատաշուկայի սույն հետազոտությունը:

Հետազոտության շրջանակներում խնդիր է դրվել.

- գնահատել կառավարման և տնտեսագետի որակավորմամբ մասնագետների պահանջարկը աշխատաշուկայում,
- վերլուծել կառավարիչների և տնտեսագետների աշխատանքի ընդունման հիմնական պահանջները գործատուների շրջանում,
- բացահայտել, գնահատել և ընդհանրացված կերպով ներկայացնել աշխատաշուկայում տնտեսագետի և կառավարիչի որակավորմամբ կադրերի իմացությանն ու պարտականություններին ներկայացվող հիմնական պահանջները:

Հատկանշական է, որ ՀՊՏՀ-ում 2012 թվականին իրականացվել և հրատարակվել է համանման հետազոտություն (մանրամասն հնարավոր է ծանոթանալ http://media.asue.am/upload/dramashnornhner/Zaqaryan.pdf հղմամբ), որը սակայն առավելապես կենտրոնացած է եղել տնտեսագետ կադրերի պահանջարկի գնահատմանը և խորությամբ չի անդրադարձել աշխատաշուկայի նկարագրմանը:

Հետազոտությունն իրականացվել է 2017 թվականի թվականի առաջին եռամսյակում և ներառում է առ 30.03.2017 թ. դրությամբ առկա (և նախորդող ժամանակահատվածից թափուր) աշխատատեղերի հայտարարությունների արդյունքները:

Հետազոտությունն իրականացվել է ամենօրյա մշտադիտարկման եղանակով, որի օբյեկտ են հանդիսացել աշխատանքի հայտարարությունների 13 կայքեր՝

1. careercenter.am
2. jobs.am
3. jobfinder.am
4. myjob.am
5. tanger.am
6. list.am
7. ashxatanq.am
8. igind.am
9. job.am
10. ijob.am
11. job.banks.am
12. csc.am
13. hr.am

Մշտադիտարկման ընթացքում առանձնացվել և ուսումնասիրվել են աշխատանքային այն հայտարարությունները, որտեղ տնտեսագետի որոկավորում ունեցող կադրեր են պահանջվել: Ընդհանուր առմամբ մշտադիտարկումը ներառել է թվով 5507 հայտարարություն, որոնցից 855-ում կամ 15.5%-ում պահանջվել են տնտեսագետի մասնագիտությամբ կադրեր:

Հաջորդող ժամանակահատվածում հաշվետվությունը կներառի նաև զբոսաշրջության, սերվիսի, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում և պետական հատվածում պահանջվող աշխատուժի պահանջարկի միտումները, աշխատողների պարտականությունների և գործառույթների նկարագրերը, ինչպես նաև գործատուների կողմից աշխատողներին ներկայացվող պահանջների հիմնական նկարագրերը: Սա հնարավորություն կընձեռի հետայսու ամենամյա բնույթ կրող սույն հետազոտության շրջանակներում ամբողջությամբ ներառել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, ինչպես նաև ՀՀ-ում այլ բուհերի կողմից իրականացվող տնտեսագիտության, կառավարման, սերվիսի, զբոսաշրջության և ինֆորմատիկայի բակալավրի

ու մագիստրոսի որակավորում շնորհող կրթական ծրագրերի շրջանավարտների՝ աշխատաշուկայում պահանջվածության, աշխատանքային պարտականությունների, ինչպես նաև մասնագետների հմտություններին ներկայացվող պահանջների նկարագրերը:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ



Առկա հայտարարություններում գերակշռել է մարքեթինգի և վաճառքի մասնագետների պահանջարկը՝ 47%, որին հետևում է հաշվապահական հաշվառման՝ 18%, մենեջերների՝ 16%, ֆինանսների՝ 15% և կառավարչական հաշվառման ու աուդիտի բնագավառների մասնագետների պահանջարկը՝ 3%: Այլ մասնագիտությունների տեսակարար կշիռն ավելի փոքր է եղել՝ ընդամենը 1% և ներառել է վիճակագիրներին և տնտեսագետներին:



Դիտարկված աշխատատեղերի 17%-ը ղեկավար պաշտոններ են: Վարչական բնույթի աշխատատեղերը գերակշռել են մենեջմենթ մասնագիտության բնագավառում (36%), որին հետևում են ֆինանսների (22%), մարքեթինգ և վաճառքի (22%), հաշվապահական հաշվառման (16%) և կառավարչական հաշվառման և աուդիտի (2%) մասնագիտությունները:

Հատկանշական է, որ տնտեսագիտական բնույթի ոչ բոլոր աշխատատեղերի համար է բարձրագույն մասնագիտական կամ տնտեսագիտական կրթության պարտադիր պահանջ դրվել: Ուսումնասիրված հայտարարությունների 35.4%-ում բարձ-

րագույն կրթության կամ համապատասխան դիպլոմի առկայության մասին առհասարակ հիշատակում չի եղել:



Իսկ այն հայտարարությունների թվում, որտեղ թեկնածուներին ներկայացվող պահանջների շարքում բարձրագույն կրթություն ունենալը մատնանշվել է իբրև պահանջ, 52.7%-ում պահանջվել է հենց մասնագիտական կրթություն, 10.4%-ում՝ տնտեսագիտական, իսկ 36.9%-ում միայն բարձրագույն կրթության պահանջ է եղել՝ առանց մասնագիտական ոլորտը նշելու:



Ինչ վերաբերում է կրթական աստիճանին, ապա մագիստրոսի կամ բակալավրի աստիճանի առկայության մասին պահանջ ներկայացվել է հայտարարությունների միայն 10%-ում, ինչը վկայում է, որ որ ՀՀ-ում գործատուները աշխատակիցների կողմից մագիստրոսի կրթական աստիճան ունենալը լուրջ մրցակցային առավելություն չեն դիտարկում և այդ պատճառով էլ՝ աշխատատեղերի համար սահմանված պահանջներում համապատասխան կետ չեն ներառում:





Դիտարկված հատարարություններում հայտատուներին ներկայացվող սեռատարիքային բնույթի պահանջները

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

Գործատուների հայտարարություններում հայտատուների սեռին և տարիքին ներկայացվող պահանջների ընդհանրացումից ակնհայտ է, որ աշխատաշուկայում առավել պահանջված են 26-35 տարեկան (47%) և 21-25 տարեկան (43%) երիտասարդ ու նորավարտ մասնագետները: Դիտարկված հայտարարությունների 90%-ում թեկնածուների սեռային պատկանելիության պահանջ չի առաջադրվել: Այսինքն՝ այս հանգամանքը գործատուների կողմից առանձնապես չի կարևորվում:



Մյուս կարևորագույն ցուցանիշներից մեկը աշխատանքային փորձի պահանջն է: Դիտարկված հայտարարությունների 43.9%-ում աշխատաքային փորձի պարտադիր պահանջ չի դրվել: Այսինքն՝ գործատուների բավականին մեծ տոկոս պատրաստ է աշխատանքի ընդունել նաև աշխատանքային փորձ չունեցող մասնագետների: Իսկ աշխատանքային փորձի պահանջ ներառած հայտարարությունների 35%-ում գործատուները պահանջել են նվազագույնը 1 տարվա աշխատանքային փորձ, 29%-ում նվազագույնը 2 տարվա և 20%-ում՝ 3 տարվա աշխատանքային փորձ և 12%-ում՝ նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ:

Կարելի է եզրակացնել, որ նորավարտ և երիտասարդ կադրերի պահանջարկը աշխատաշուկայում դեռևս մեծ է, և աշխատանքային փորձի բացակայությունը խոչընդոտ չի հանդիսանում աշխատանքի ընդունվելու համար: Սակայն առավել հեշտությամբ աշխատանք կարող են գտնել 1-2 տարվա փորձառություն ունեցողները:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է նաև մենեջերների, տնտեսագետների, մարքեթինգի և վաճառքների, ֆինանսական հատվածի, հաշվապահական հաշվառման և աուդիտի մասնագետների վարձատրության չափը, թեպետ

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

պետք է նշել, որ դիտարկված աշխատանքի հայտարարություններից ընդամենը 20%-ում են գործատուները նշել աշխատանքի վարձատրության չափը:



Այն հայտարարություններում, որտեղ գործատուները ներկայացրել են աշխատավարձի մեծության վերաբերյալ տեղեկատվություն, գերակշռել են 100-150000 դրամ միջակայքում աշխատավարձ ենթադրող թափուր աշխատատեղերը (37%): Եվ ընդհանրապես, հայտարարությունների մոտ 75%-ում նշված աշխատավարձի չափը հիմնականում ցածր է կամ մոտ է գտնվել ՀՀ-ում միջին անվանական աշխատավարձի մեծությանը: Եվ միայն հայտարարությունների 25%-ի դեպքում է գործատուն առաջարկել միջինից բարձր աշխատավարձ:



Հետազոտության շրջանակներում վերլուծվել են գործատուների կողմից ներկայացված աշխատանքային պարտականությունների շրջանակն ու հիմնական պահանջները: Ուսումնասիրված աշխատանքային հայտարարություններում առավել հաճախ ներկայացված մասնագիտական հմտության պահանջն առնչվել է լեզուների իմացությանն ու համակարգչային հմտությունների առկայությանը: Գործատուների առնվազն կեսի (55.2%-ի) կողմից կարևորվում է անգլերենի և ռուսերենի միաժամանակ իմացությունը: Դիտարկված հայտարարությունների 71.3%-ում պահանջվել է առնվազն ռուսերենի, իսկ 74.6%-ում՝ առնվազն անգլերենի պարտադիր իմացություն:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



Լեզուների պահանջն առավել հաճախ հանդիպել է ֆինանսների (68%), մարքեթինգի և վաճառքների (66%), մենեջմենթի (62%), կառավարչական հաշվառման և աուդիտի (57%) բնագավառի մասնագիտությունների թափուր աշխատատեղերի հայտարարություններում և համեմատաբար քիչ՝ հաշվապահների պահանջով թափուր աշխատատեղերի հայտարարություններում(ընդամենը 25%):



Գործատուների կողմից կարևորվել է նաև հայտատուների մոտ համակարգչային հմտությունների առկայությունը: Նրանց գերակշռող մեծամասնությունը՝ 47.2%-ը, պահանջում է MS Office-ի իմացություն: Որոշ հայտարարություններում հատուկ առանձնացվում է MS Word (5.3%) և MS Excel (11.2%) փաթեթների իմացությունը: Հայտատուներին ներկայացվել են նաև հատուկ մասնագիտական համակարգչային ծրագրերի (ՀԾ, 1C և այլն) իմացության պահանջներ (հայտարարությունների մոտ 20%-ում):

Օտար լեզուների տիրապետումից և համակարգչային հմտություններից բացի, առանձնացվել են նաև այլ հիմնական պահանջներ: Ընդհանուր առմամբ գործատուների հայտարարություններում հայտատուների հմտությունների առնչությամբ ներկայացված են եղել թվով 1543 պահանջներ, որոնցից 14-ը այս կամ այն չափով ընդհանուր են եղել բոլորի համար:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



1 Մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողություն
2 Վերլուծական մտածողություն, խնդիրները հայտնաբերելու, ոչ ստանդարտ, լուծումներ առաջարկելու և արագորոշումներ ընդունելու կարողություն
3 Բանակցային հմտություններ
4 Ժամանակի կառավարման հմտություններ, սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն
5 Պլանավորման,կազմակերպչական հմտություններ և հաշվետվողականության
6 Ղեկավարման հմտություններ, առաջնորդի հատկանիշներ
7 Սթրեսային իրավիճակներում աշխատելու հմտություն
8 Վաճառքի հմտություններ
9 ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ իմացություն
10 Պրեզենտացիոն հմտություններ
11 Օնլայն մարքեթինգի բազային գիտելիքներ
12 ՀՀ բանկային օրենսդրության, ԿԲ կանոնակարգերի իմացություն
13 Բիզնես վերլուծության մեթոդոլոգիայի և սկզբունքների իմացություն
14 ՀՀ աշխատանքային օրենսդրության իմացություն
15 Այլ

Գործատուները առավել հաճախ կարևորել են մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողության պահանջը (27.8%): Ընդ որում, այս պահանջն ամենատարածվածն է դիտարկված բոլոր մասնագիտությունների դեպքում: Կարևորվել են նաև վերլուծական մտածողությունը, խնդիրներ հայտնաբերելու, ոչ ստանդարտ լուծումներ առաջարկելու և արագ որոշումներ ընդունելու կարողությունը (13.4%), բանակցային հմտությունները (8.9%), ժամանակի կառավարման հմտությունները, սեղմ ժամկետներում աշխատելու կարողությունը (8.8%) և պլանավորման, կազմակերպչական ունակությունները (8.1%), ղեկավարման և առաջնորդման հմտությունները (6.3%), ինչպես նաև սթրեսային իրավիճակներում աշխատելու կարողությունը (5.1%):

Մնացյալ ունակությունները, որոնց տեսակարար կշիռը հիմնականում տատանվել է 0.5-39%-ի միջակայքում հանդիսացել են նեղ մասնագիտական (բացառությամբ պրեզենտացիոն ունակությունների):

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարքեթինգի և վաճառքի մասնագետների շրջանակը ներառել է մարքեթոլոգի, վաճառքի մենեջերի, թվային մարքեթինգի մասնագետի, լոգիստիկայի մասնագետի, PR մենեջերի և մերչնդայզերի մասնագիտությունները:



Մարքեթինգի և վաճառքի մասնագիտության բնագավառում թափուր աշխատատեղերի առաջին կեսում պահանջվել է վաճառքի, մյուսում՝ մարքեթինգի մասնագետներ: Վաճառքի մասնագետների տեսակարար կշիռն ամենամեծն է՝ 48%, այս մասնագետների թափուր հաստիքները հանդիպել են շուկայի զարգացման պատասխանատու, բրենդ մենեջեր, կորպորատիվ վաճառքի ներկայացուցիչ, ուղիղ վաճառքների գործակալ, վաճառքի բաժնի աշխատակից անվանումներով: Վաճառքի մենեջերների պահանջին հետևում է մարքեթոլոգների պահանջը՝ 24%: Թվային մարքեթինգի մասնագետների պահանջը կազմում է 13%: Հաջորդը լոգիստիկայի մասնագետների պահանջն է, որը կազմում է 8%: Գովազդի մասնագետների պահանջը 3% է: Վերջինս առավել հաճախ ներկայացվել է իբրև գովազդային գործակալ, գովազդի մենեջեր, մեդիապլանավորման մասնագետ, BTL մարքեթինգի մասնագետ: 3% է կազմել նաև PR մենեջերների և 2%՝ մերչնդայզերների պահանջարկը (վերջինները հանդիպել են նույն անվանումներով):

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



Մարքեթինգի և վաճառքի մասնագետներին ներկայացվող հիմնական պահանջները առնչվել են լեզվական կարողություններին, համակարգչային հմտություններին, աշխատանքային փորձին և համապատասխան կրթությանը:

Մարքեթինգի և վաճառքի մասնագետների առումով առավել հաճախ է պահանջվել բարձրագույն մասնագիտական կրթություն (49%): Մեծ է եղել նաև ընդհանրապես բարձրագույն կրթության պահանջը՝ առանց համապատասխան մասնագիտական ոլորտի մատնանշման (42%):

Հաջորդ կարևոր պահանջը աշխատանքային փորձի առկայությունն է: Աշխատանքային փորձի պահանջի մեջ գերակշռող է նվազագույնը 1 տարվա (35%) և 2 տարվա (33%) պահանջը: Համեմատաբար ավելի փոքր է 3 և ավելի տարիների աշխատանքային փորձի պահանջը:



Մարքեթինգի և վաճառքի մասնագետների մոտ առավելապես կարևորվում է անգլերենի և ռուսերենի իմացությունը միաժամանակյա իմացությունը (59%): Պարտադիր անգլերենի և պարտադիր ռուսերենի իմացությունը ևս բարձր տոկոս է կազմում (համապատասխանաբար 23% և 12%): Փոքր չէ նաև ռուսերենի պարտադիր իմացության պահանջը՝ 12%: Համեմատաբար փոքր են անգլերենի և այլ օտար լեզվի (4%), անգլերենի և ռուսերենի ցանկալի իմացության (2%) պահանջը:

Մարքեթինգի և վաճառքի մասնագետներին ներկայացվող հաջորդ կարևոր պահանջը համակարգչային հմտություններն են: Ամենապահանջվածը MS Office-ի իմացությունն է՝ 55.8%, որին հետևում է ընդհանուր համակարգչային հմտությունները (16.9%): Մարքեթինգի և վաճառքի մասնագետների համար կարևորվում է սոցիալական ցանցերում (Facebook, VK, Linkdin, Instagram, G+ և այլն) և համացանցում աշխատելու և ապրանքների առաջմղման իմացությունը (10.1%), ինչպես նաև Adobe Photoshop, Corel Draw ծրագրերի իմացությունը:



1 մարդկանց հետ շփվելու,թիմում աշխատելու կարողություն
2 վերլուծական մտածողություն,խնդիրները հայտնաբերելու, ոչ ստանդարտ լուծումներ առաջարկելու և արագ որոշումներ ընդունելու կարողություն
3 ժամանակի կառավարման հմտություններ,սեղմ ժամկետներում աշխատելու կարողությունն
4 պլանավորման, կազմակերպչական հմտություններ և հաշվետվողականության
5 բանակցային հմտություններ
6 ղեկավարման հմտություններ,առաջնորդի հատկանիշներ
7 Սթրեսային իրավիճակներում աշխատելու հմտություն
8 պրեզենտացիոն հմտություններ
9 օնլայն մարքեթինգի բազային գիտելիքներ
10 վաճառքի հմտություններ
11 ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ իմացություն
12 բիզնես վերլուծության մեթոդոլոգիայի և սկզբունքների իմացություն
13 ՀՀ բանկային օրենսդրության,ԿԲ կանոնակարգերի իմացություն
14 այլ

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

Մարքեթոլոգների և վաճառքի մասնագետների պարագայում առավելապես կարևորվել են մարդկանց հետ հաղորդակցվելու և թիմում աշխատելու (30%), վերլուծելու և ոչ ստանդարտ լուծումներ առաջարկելու (12%), ժամանակի կառավարման (8.5%), կազմակերպչական (8.3%), բանակցային (8.1%), ղեկավարման և առաջնորդման (6.6%), պրեզենտացիոն (5.1%) և օնլայն մարքեթինգի հմտությունները (3.7%): Այլ պահանջների թվում էական են եղել նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը, SEO վերլուծությունների իրականացման կարողությունները և այլն:



1 շուկայի հետազոտություն, անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքում
2 սպառողների և գործընկերների հետ շփում և կապի պահպանում
3 հաշվետվությունների կազմում և ներկայացում
4 վաճառքների կազմակերպում և վերահսկողություն
5 բանակցությունների վարում, նոր գործընկերների ներգրավում
6 առաջմղում թվային հարթակում
7 իրացման ծավալների ընդլայնում,առաջմղման ռազմավարության մշակում
8 մարքեթինգային ռազմավարության մշակում և պլանավորում
9 մեդիապլանավորում,pr,գովազդային արշավների մշակում և իրականացում
10 մերչնդայզինգի և լոգիստիկայի ապահովում
11 մարքեթինգային բյուջեի մշակում և պատասխանատվություն՝ միջոցների օպտիմալ օգտագործման համար

Մարքեթինգի և վաճառքի մասնագետների ենթադրվող աշխատանքային պարտականությունների շրջանակում գերակշռող են. շուկան հետազոտելու, անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրելու, սպառողների ու գործընկերների հետ շփման ու կապերի պահպանման, մարքեթինգային հաշվետվությունների կազմման, վաճառքների կազմակերպման ու վերահսկման, բանակցությունների վարման ու նոր

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

գործընկերների ներգրավման, էլեկտրոնային հարթակներում ընկերության առաջարկի առաջմղման, ինչպես նաև իրացման ծավալների ընդլայնման ռազմավարությունների մշակման պարտականությունները: Համեմատաբար ավելի քիչ են հանդիպում մեդիապլանավորումը, PR-ը, գովազդային արշավների մշակումն ու իրականացումը, մերչնդայզինգի և լոգիստիկայի ապահովումը և մարքեթինգային բյուջեի մշակումը:

Աշխատաշուկայում վաճառքի մասնագետների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. հայերենի,անգլերենի, ռուսերենի իմացությունը, համակարգչային ծրագրերի իմացությունը /MS Office,Outlook Express,Internet/, ցանկալի պահանջ է 1C ծրագրի տիրապետումը, մարքեթինգի բազային գիտելիքների առկայությունը, վաճառքի հիմնական հմտությունների և տեխնիկաների տիրապետումը, մեծ ծավալի ինֆորմացիայի հետ աշխատելու ունակությունները, քանակական և որակական վերլուծություններ կատարելու, խնդիրներ նկատելու և դրանց օպտիմալ լուծումներ առաջադրելու ունակությունը, պլանավորման ունակությունը, մաթեմատիկական գիտելիքները, հաղորդակցվելու, թիմում աշխատելու և կազմակերպչական հմտությունների առկայությունը, գրագետ խոսքի կառուցման և բանակցային գերազանց հմտությունները: Ոչ մասնագիտական դաշտից ցանկալի (փոքր ընկերություններում հիմնականում պարտադրի) պահանջ է անձնական մեքենայի և վարորդական իրավունքի առկայությունը:

Վաճառքի մասնագետների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. վաճառքի գործընթացի կազմակերպումը, պատվերների գրանցումը, վաճառքների իրականացումը, արտադրանքի առաջխաղացումը և վաճառակետերի թվի ընդլայնումը, վաճառքի խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը, օրական, շաբաթական, ամսական և տարեկան վաճառքների պլանավորումը, համագործակցող գործընկերների հետ կոմերցիոն բանակցությունների վարումը, առևտրի աճի բարձրացմանը և բարելավմանը միտված առաջարկությունների և

նախաձեռնությունների ներկայացումը, շուկայում ապրանքների վաճառքի ուսում-նասիրությունների իրականացումը, իրացված ապրանքների դիմաց վճարների ժամանակին ստացմանը հետևելը, շուկայում ընկերության մասնաբաժնի ընդլայնման ռազմավարությունների մշակումը և իրականացումը, նոր հաճախորդների ներգրավումը և մշտական հաճախորդների հետ ինտենսիվ աշխատանքների իրականացումը, կարևոր հաճախորդների և գործընկերների հետ գործարար բանակցությունների վարումը, ընկերության մարքեթինգային ծրագրերի մշակմանը մասնակցությունը, վաճառքի կետերում գովազդային նյութերի արդյունավետ օգտագործման, վաճառքի ստենդերի, սարքավորումների տեղադրման ապահովումը և վերահսկողությունը, մրցակիցների և նրանց նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերադասներին դրանց վերաբերյալ ժամանակին տեղեկացնելը:

Վաճառքի բաժնի ղեկավարի թափուր պաշտոնների տեսակարար կշիռը վաճառք մասնագիտության մեջ կազմել է 12%: Վերջինները հանդիպել են իբրև՝ վաճառքի տնօրեն, վաճառքի թիմի ղեկավար, մեծածախ, մանրածախ վաճառքի և շուկայի զարգացման տնօրեն, վաճառքի և աջակցման բաժնի պետ անվանումներով:

Աշխատաշուկայում վաճառքի թիմի ղեկավարի հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. հայերենի, ռուսերենի և անգլերենի գերազանց իմացությունը, համակարգչային ծրագրերի իմացությունը /MS Office, Outlook Express, Internet, 1C/, մարքեթինգային հետազոտությունների իրականացման խորը գիտելիքների առկայությունը, գործունեության դաշտը կարգավորող օրենսդրության իմացությունը, թիմում աշխատելու ունակությունը և աշխատակիցներին ղեկավարելու հմտությունները, ինչպես նաև գերազանց բանակցային հմտությունները:

Վաճառքի մասնագետների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. իրացված ապրանքների դիմաց վճարների ժամանակին ստացմանը հետևելը, շուկայում ընկերության մասնաբաժնի ընդլայնման ռազմավարությունների մշակումը և իրականացմանը հետևելը, վաճառքի արդյունքների վերլուծությունը և տնօրինությանը դրանց արդյունքներն արտացոլող հաշվետվությունների ներկայացումը, հաճախորդների սպասարկման գործընթացի կազմակերպումը և վերահսկումը, հաճախորդների սպասարկման որակի վերլուծությունը, արդյունքներն արտացոլող հաշվետվությունների մշակումը և դրանց հիման վրա սպասարկման որակի բարելավմանն ուղղված աշխատանքների պլանավորումը, վաճառքի և սպասարկման աշխատակիցների թիմային աշխատանքի կազմակերպումը, որակի վերահսկումը աշխատանքի բարելավումը և աշխատանքային կատարողական ցուցանիշների բարձրացումը, թիմային աշխատանքը սատարող միջոցառումների կազմակերպումը, վաճառքի բաժնի մարդկային ռեսուրսների աշխատանքների վերահսկումը՝ ըստ յուրաքանչյուր աշխատակցի պաշտոնի նկարագրով սահմանված պարտականությունների, առանձին աշխատակիցների կատարողականի գնահատումը, տեղական շուկայում արտադրանքի առաջխաղացման ռազմավարությունների մշակումը, շուկայի հետազոտության իրականացումը, մրցակիցների և նրանց քաղաքականությա ուսումնասիրումը, դրանց արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծությունների և հաշվետվությունների կազմումը, շուկայի և նոր արտադրանքի զարգացման հնարավորությունների ու միտումների վերլուծությունը, մարքեթինգային ռազմավարությունների և ծրագերի մշակումը, ընկերության դրական իմիջի ձևավորմանը նպաստելը, հաճախորդների հետ հարաբերությունների կառավարումը, ինչպես նաև գովազդային արշավների կազմակերպումը:

Գործատուների աշխատանքի առաջարկություններում մարքեթոլոգների հաստիքները հանդիպում են մարքեթինգային հետազոտությունների մասնագետ, ելքային հաղոր-

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

դակցությունների մասնագետ, մարքեթինգի մասնագետ, մարքեթոլոգ, տնտեսագետ-մարքեթոլոգ անվանումներով:

Աշխատաշուկայում մարքեթոլոգների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացությունը, համակարգչային գերազանց գիտելիքները (MS Office,Excel, PowerPoint, Access, SPSS), հետազոտության տարբեր մեթոդների իմացությունը և կիրառման փորձառությունը, պլանավորման ունակությունը, թիմում աշխատելու կարողությունը, անալիտիկ մտածողությունը և վերլուծական կարողությունները, պրեզենտացիոն հմտությունները, ստեղծարար մտածելակերպը:

Մարքեթոլոգների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. ընկերության կողմից առաջարկվող ապրանքների պահանջարկի և առաջարկի հարաբերակցության վերլուծությունը, պահանջարկի մեծության գնահատումը, առկա ռեսուրսներին համապատասխանող իրացման խթանման և պահանջարկի ձևավորման վերաբերյալ ծրագրերի մշակումը, սպասարկման որակի, ապրանքներով ապահովվածության, ընկերության ճանաչելիության վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծությունը, ապրանքների հաջող իրացման վրա ազդող գործոնների հետազոտումը, պահանջարկի ավելացման և նվազման պատճառների ուսումնասիրությունը, ընկերության ապրանքների և ծառայությունների շուկաների և դրանց զարգացման միտումների համալիր հետազոտությունը, մրցակցային միջավայրի վերլուծությունը, ընկերության ապրանքային, գնային, տեղաբաշխման, առաջմղման և մերչենդայզինգի ռազմավարությունների մշակումը և իրականացումը, հաճախորդների հետ հարաբերությունների (CRM) կառավարումը, մարքեթինգային բյուջեի մշակումը և վերահսկողությունը՝ միջոցների արդյունավետ օգտագործման համար:

Մարքեթինգի մասնագետների թափուր աշխատեղերիի հայտարարությունների 8%-ը կազմել են ղեկավար պաշտոնները:

Աշխատաշուկայում մարքեթինգի բաժնի ղեկավարի հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուների գերազանց իմացությունը, համակարգչային գիտելիքները և MS Office-ի (հատկապես Excel և PowerPoint) գերազանց իմացությունը, մարքեթինգային և բիզնես ռազմավարությունների մշակման, ինչպես նաև բիզնեսին ուղղված մարքեթինգային ծրագրեր մշակելու և իրականացնելու կարողությունը, առաջխաղացման հմտությունները, պլանավորման, համակարգման և ղեկավարման գերազանց հմտությունները, հաղորդակցման (գրավոր և բանավոր) գերազանց հմտությունները, պիմային աշխատանքի և թիմում հաղորդակցման հմտությունները՝ կազմակերպության բոլոր աշխատակիցների հետ արդյունավետ համագործակցելու համար, լավ ներկայացման (պրեզենտացիոն), ստեղծագործական, կազմակերպչական, ինչպես նաև բանակցություններ վարելու հմտությունները:

Մարքեթինգի բաժնի ղեկավարի աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. կազմակերպության մարքեթինգային ռազմավարությունների (ներառյալ արշավները, միջոցառումները և PR-ը) վերահսկողությունը, մարքեթինգային, հաղորդակցման և հասարակայնության հետ կապերի արդյունավետ կառավարումը, մարքեթինգային միջողացառումները, տեղեկատվական նյութերն ու ծրագրերը որոշակիացնելու նպատակով միջթիմային հետ համագործակության հաստատումը, վեբ-արշավների, SEO/SEM ծրագրերի ծրագրումը և իրականացումը, մարքեթինգային տվյալների բազայի ձևավորումը, էլեկտրոնային նամակագրության վարումը, լրատվամիջոցների հետ հաղորդակցությունների և տպագիր գովազդային ակցիաների խթանումը, գովազդային միջոցառումների կամ ակցիաների վերաբերյալ նոր գաղափարների առաջադրումը և իրականացումը, մարքեթինգի բյուջեի կառավարումը և

ռեսուրսների բաշխման իրականացումը, հմուտ մարքեթինգային թիմի ձևավորումը և աշխատանքների կառավարումը, ընկերության շուկայական առաջարկությունների (ապրանքների) ընդհանուր մարքեթինգային աջակցության գործունեության կառավարումը, ղեկավարությանը բիզնես գործունեության արդյունքների վերաբերյալ պարբերաբար ֆինանսական հաշվետվությունների ձևավորման ու տրամադրման աշխատանքների համակարգումը:

Թվային մարքեթինգի մասնագետների պահանջարկի տեսակարար կշիռը մարքեթինգի և վաճառքի մասնագետների աշխատանքի առաջարկությունների ծավալում կազմել է 13%: Թվային մարքեթինգի մասնագետի թափուր աշխատատեղերը հանդիպել են՝ ինտերնետ-մարքեթոլոգ, քոնթենթ մենեջեր, սոցիալական մեդիա մարքեթինգի մասնագետ, SEO մասնագետ, օնլայն մարքեթինգի մասնագետ, E-mail մարքեթինգի մասնագետ անվանումներով:

Աշխատաշուկայում թվային մարքեթինգի մասնագետների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. հայերենի,անգլերենի և ռուսերենի գերազանց իմացությունը, օնլայն մարքեթինգի ռազմավարության և գործիքների տիրապետումը (Google Analytics, Google Adwords, Facebook ads, և այլն), սոցիալական ցանցերի գերազանց իմացությունը (Facebook, Vkontakte, Twitter, Google+, YouTube, Instagram, Linkedin և այլն), Adobe Photoshop, Adobe illustrator, Adobe In Design, Corel Draw ծրագրերի գերազանց տիրապետումը, SEO/SEM, email, սոցիալական մեդիա արշավներ կազմակերպելու և ղեկավարելու փորձառությունը, վեբ դիզայնի և քոնթենթ մենեջմենթի համակարգի իմացությունը, գերազանց կոմիունիկացիոն հմտությունները (գրավոր և բանավոր), թիմում աշխատելու կարողությունը, ստեղծագործականությունը և նորարարական մտքեր առաջադրելու ունակությունը, կազմակերպչական և բանակցային հմտությունները:

Վաճառքի մասնագետների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. ընկերության կոմերցիոն պահանջները բավարարելու նպատակով ինտերնետ մարքեթինգային և SEO յուրահատուկ մեթոդների մշակումը, կայքի կառուցվածքի վերլուծությունը և կատարելագործման քաղաքականության մշակումը, մրցակցային դաշտում առաջատար դիրք գրավելու համար նոր ուղիների առաջադրումը, կայքի ներքին և արտաքին SEO վերահսկողության իրականացումը, կայքի աշխատունակության անընդհատության ապահովումը, կայքի ակտիվության բարձրրացումը, այցելությունների թվի ավելացումը, սոցիալական ցանցերում հրապարակումների համար նախատեսված լուսանկարների մշակումը, հաճախորդների տվյալների բազաների ձևավորումը և վարումը:

Աշխատաշուկայում մարքեթինգի և վաճառքների մասնագետների որոնման առաջարկում իր տեսակարար կշռով (8%) վերջին կարևոր մասնագիտացումը հանդիսանում է լոգիստիկան: Լոգիստների հաստիքները գործատուների կողմից առաջարկվում են լոգիստ-մենեջեր, պահեստապետ, արտահանման ներմուծման մենեջեր, լոգիստիկայի և վաճառքի համակարգող անվանումներով:

Աշխատաշուկայում լոգիստիկայի մասնագետների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. հայերենի, անգլերենի և ռուսերենի գերազանց իմացությունը, համակարգչային հմտությունները (MS Word, Excel, PowerPoint), փայլուն կոմունիկացիոն հմտությունները, թիմում աշխատելու կարողությունը, պահեստի ղեկավարման հմտությունները, GDP ստանդարտների իմացությունը, թիմ ղեկավարելու հմտությունը և ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ փաստաթղթային և բեռնային գործողությունների իմացությունը:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

Վաճառքի մասնագետների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. շուկայի ուսումնասիրությունը, ընկերության ապրանքատեսականու արտահանումը, անհրաժեշտ հումքի, ապրանքատեսականու ներմուծումը, ընկերության առկա գործընկերների հետ համագործակցությունը, վաճառքի միջազգային նոր հնարավորությունների ու գնորդների բացահայտումը և համագործակցության զարգացումը արտահանման շուկայում, ընկերության կողմից ներմուծվող և արտահանվող ապրանքատեսակների վերաբերյալ շուկայական վերլուծության իրականացումը՝ գնի, առաջարկի, պահանջարկի ուսումնասիրությունը և հաշվետվության ներկայացումը, արտասահմանյան գնորդների և մատակարարների հետ արդյունավետ բանակցությունների վարումը, գործարքներին վերաբերող փաստաթղթերի պատրաստումը, արտաքին առևտրային գործընթացի վերահսկողությունը, կնքված գործարքների հիման վրա իրականացվող բեռնափոխադրումների կազմակերպումը, ներմուծման համար անհրաժեշտ ամբողջ թղթաշրջանառության վերահսկումը և կառավարումը, օտարերկրյա մատակարարների հետ բանակցությունների վարումը, նոր օտարերկրյա շուկաների որոնումը և միջազգային ապրանքաշարժի վերահսկումը:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆինանսների բնագավառի մասնագետների շրջանակը ներառել է ֆինանսիստի, վարկային մասնագետի, ապահովագրական գործակալի, բանկի սպասարկման բաժնի աշխատակցի, ֆինանսական շուկայում առևտրային գործարքներ իրականացողի և ֆինանսական վերլուծաբան մասնագիտացումները:



Ֆինանսների բնագավառի մասնագետների թափուր աշխատատեղերի հայտարարությունների 37%-ն առնչվել են ֆինանսիստներին: Իբրև ֆինանսիստ գործատուներն առավել հաճախ դիտարկել են կազմակերպության ֆինանսների մասնագետի, ֆինանսական խորհրդատուի, ռիսկերի գնահատման մասնագետի, ռիսկ մենեջերի, զարգացման ծրագրերի պատասխանատուի աշխատանքը: Աշխատանքի հրավերների 36%-ը կազմել են վարկային մասնագետի, 14%-ը ֆինանսական վերլուծաբանի, 5-6%-ը ապահովագրական գործակալների և բանկի սպասարկման բաժնի աշխատակցի թափուր հաստիքները: Ֆինանսների բնագավառի մասնագետների աշխատանքի առաջարկում ֆինանսական շուկայում առևտրային գործարք իրականացնողների տեսակարար կշիռը կազմել է շուրջ 2%:

Ֆինանսների բնագավառի մասնագետներին առաջադրված հիմնական պահանջները վերաբերել են աշխատանքային փորձին, լեզվական, համակարգչային հմտություններին և համապատասխան կրթության առկայությանը:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս







Դիտարկված հայտարարությունների 91%-ում ֆինանսների բնագավառի մասնագիտությունների համար բարձրագույն կրթության պարտադիր պահանջ է դրվել: Ընդ որում, դրանց 63%-ում պահանջվել է բարձրագույն մասնագիտական, 21%-ում՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն, իսկ 16%-ում բարձրագույն կրթության պահանջ է եղել՝առանց մասնագիտական ոլորտը նշելու: Հաջորդ կարևոր գործոնի՝ աշխատանքային փորձի մասին հիշատակում է եղել դիտարկված հայտարարությունների 67%-ում: Աշխատանքային փորձի պահանջի մեջ գերակշռող են նվազագույնը 1 (33%), 2 (35%) և 3 (23%) տարվա աշխատանքային փորձի պահանջը:

Օտար լեզուների իմացության նկատմամբ պահանջի տեսակարար կշիռը ֆինանսների բնագավառում ամենամեծն է: Աշատանքի հայտարարություններում ամենատարածվածը անգլերենի և ռուսերենի միաժամանակյա իմացության պարտադիր պահանջն է (43%): Մեծ է նաև միայն անգլերենի պարտադիր իմացության պահանջը (30%): Իսկ ավելի քիչ տոկոսներով՝ ցանկալի անգլերենի (15%) և պարտադիր ռուսերենի (12%) պահանջները:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



Ի տարբերություն մարքեթինգի մասնագետների՝ ֆինանսների բնագավառի մասնագետներին առանձնահատուկ համակարգչային ծրագրային ապահովման միջոցների իմացության պահանջներ չեն սահմանվում: Ամենապահանջվածը MS Office-ի իմացությունն է (60%): Հաջորդը՝ ընդհանուր համակարգչային հմտությունների պահանջն է (15%), որին հաջորդում են ՀԾ (9%), և 1C (9%) ծրագրերի իմացության պահանջը:



1 Մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողություն
2 Վերլուծական մտածողություն, խնդիրները հայտնաբերելու, ոչ ստանդարտ, լուծումներ առաջարկելու և արագ կողմնորոշվելու կարողություն
3 Ժամանակի կառավարման հմտություններ, սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն
4 Բանակցային հմտություններ
5 ՀՀ բանկային օրենսդրության և ԿԲ կանոնակարգերի իմացություն
6 Պլանավորման,կազմակերպչական հմտություններ և հաշվետվողականության ունակություններ
7 Ղեկավարման հմտություններ, առաջնորդի հատկանիշներ
8 ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ իմացություն
9 Վաճառքի հմտություններ
10 Բիզնես վերլուծության մեթոդների և սկզբունքների իմացություն
11 Սթրեսային իրավիճակներում աշխատելու հմտություն
12 Պրեզենտացիոն ունակություններ
13 Այլ

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

Ֆինանսների բնագավառի մասնագետների առումով գործատուները առավելապես կարևորում են հաղորդակցման, թիմային աշխատանքի, վերլուծական, ոչ ստանդարտ լուծումներ առաջադրելու, պլանավորման, կազմակերպչական հաշվետվողականության, բանակցային, ժամանակի կառավարման և սեղմ ժամկետներում աշխատելու հմտությունները: Որոշ դեպքերում առանցքային պահանջներ են հանդիսանում ՀՀ բանկային օրենսդրության, ԿԲ կանոնակարգերի, հարկային օրենսդրության և ՖՄՀՍ ստանդարտների իմացությունը: Առավել նեղ մասնագիտացումների աշխատանքային առաջարկություններում ներառված են եղել միջազգային ֆինանսական ստանդարտների իմացությունը, ֆինանսական վերլուծություններ իրականացնելու կարողությունը, վարկառուների վարկունակության վերլուծության իրականացման մեթոդների իմացությունը, ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման գիտելիքները, ԴԱՀԿ ծառայության և սնանկության վերաբերյալ հիմնական գործառույթների իմացությունը և այլն:



1 վարկավորման գործընթացի կազմակերպում և իրականացում
2 ֆինանսական վերլուծությունների իրականացում
3 ֆինանսական հաշվետվությունների կազմում
4 շուկայի հետազոտություն, անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքում
5 հաշվետվությունների կազմում և ներկայացում
6 կազմակերպության ռիսկերի գնահատում
7 բանակցությունների վարում,նոր գործընկերների ներգրավում
8 ֆինանսական հոսքերի կառավարում
9 վաճառքների կազմակերպում և վերահսկողություն

Ֆինանսների բնագավառի մասնագետների համար ամենահաճախ մատնանշված պարտականությունը հանդիսացնում է վարկավորման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը է (12.9%), որին հաջորդում են ֆինանսական վերլուծությունների իրականացումը (8.7%), ֆինանսական հաշվետվությունների կազմումը (7.4%), շուկայի հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը (5.8%), կազմակերպության ռիսկերի գնահատումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը (երկուսն էլ՝ 5.2%): Առավել հաճախ մատնանշվող պարտականություններից են նաև բանակցությունների վարումը (4.2%), ֆինանսական հոսքերի կառավարումը (3.9%) և վաճառքների կազմակերպումն ու վերահսկումը (3.6%): Շուկայի վերաբերյալ տվյալների հավաքման պահանջը հիմնականում առնչվում է ֆինանսական շուկաներին և դիտարկվում է իբրև ֆինանսական վերլուծաբանների պարտականություն: Նույն կերպ վաճառքների իրականացումը հանդիսանում է բանկի հաճախորդների ներգրավման մասնագետների գործառույթ:

Աշխատաշուկայում ֆինանսների բնագավառի մասնագետների հատվածում ամենապահանջվածը ֆինանսիստներն են, ում աշխատանքի առաջարկի տեսակարար կշիռը կազմում է 37%: Արդեն նշվել է, որ իբրև ֆինանսիստ գործատուները հիմնականում դիտարկում են կազմակերպության ֆինանսների մասնագետներին, ֆինանսական խորհրդատուներին, ռիսկերի գնահատման մասնագետներին և ռիսկ մենեջերիներին, ինչպես նաև զարգացման ծրագրերի պատասխանատուներին:

Աշխատաշուկայում ֆինանսիստների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. խորացված մասնագիտական գիտելիքները, միջազգային ֆինանսական ստանդարտների իմացությունը, ՀՀ հարկային օրենսդրության, հաշվապահական հաշվառման համար պահանջվող այլ իրավական ակտերի և ՖՀՄՍ գերազանց իմացությունը, համակարգչային գերազանց գիտելիքները (այդ թվում՝ ՀԾ, ՀԾ Ձեռնարկություն փաթեթ, MS Excel, Acces, 1C 7.7 կամ 8.2) և դրանց կիրառման հմտությունները, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացությունը (մաս-

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

նագիտական օտար լեզվի միջինից բարձր մակարդակի առկայությունը), վերլուծական մտածողությունը, խնդիրներ լուծելու, արագ կողմնորոշվելու կարողությունը, պլանավորման ունակությունը, թիմում աշխատելու կարողությունը, առաջարկություններով և մտահաղացումներով հանդես գալու ունակությունը, բիզնես-էթիկայի կանոնների իմացությունը և դրանց հետևելու ունակությունը:

Ֆինանսիստների մասնագետների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. ընկերության ընդհանուր ֆինանսական քաղաքականության, ընկերության բյուջեի պլանավորման, ծախսերի և ներքին ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու լինելը, ընկերության բաժնետերերին իր պատասխանատվության տակ գտնվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովելը, ընկերության պահանջներին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ մշակելը, ծախսերի կառուցվածքի հիման վրա արտադրության շահութաբերության աստիճանի վերլուծությունը, ֆինանսական/տնտեսական հետազոտություններ իրականացնելը և վերլուծական հաշվետվություններ պատրաստելը, վերադաս ղեկավարներին ընկերության ֆինանսական դրության, դրա հետագա փոփոխությունների միտումների, ֆինանսական գործառնությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը, ընկերության հաշվապահական հաշվետվություններ վարելը, ընկերության հաշվապահական հաշվառման վարելը, ընկերության կողմից իրականացվող գործարքների ֆինանսատնտեսական վերլուծություն կատարելը, ֆինանսական և հարկային հաշվետվությունները ժամանակին և պատշաճ կազմելն ու ներկայացնելը, դրամական հոսքերի, կապիտալ և գործառնական ծախսերի հաշվառումը, բանկերի և վարկային կազմակերպությունների հետ աշխատանքը, եկամուտների և ծախսերի վերլուծությունը, ընկերության ռազմավարական նպատակների ձևակերպման և իրականացման գործընթացների վերլուծությունը և ռիսկերի գնահատումը:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

Ֆինանսների բնագավառի մասնագիտությունների առաջարկում ղեկավար պաշտոնների տեսակարար կշիռը կազմում է 36%: Ղեկավար պաշտոնի թափուր հայտարարությունների մեջ ֆինանսական ղեկավարների հաստիքներն առավել հաճախ ներկայացվում են իբրև ֆինանսական տնօրեն կամ ֆինանսական ղեկավար:

Աշխատաշուկայում ֆինանսական տնօրենների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. ֆինանսական վիճակագրության և հաշվապահական հաշվառման խորը գիտելիքների առկայությունը, ՀՀ հարկային և մաքսային օրենսդրության, հաշվապահական հաշվառման համար պահանջվող այլ իրավական ակտերի գերազանց իմացությունը, համակարգչային գերազանց գիտելիքները (այդ թվում՝ ՀԾ, MS Excel, Acces, 1C) և դրանց կիրառման հմտությունները, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացությունը, դրանցով ազատ շփվելու և մասնագիտական հաղորդակցման կարողությունը, խորը մաթեմատիկական գիտելիքները, կազմակերպչական, պլանավորման և վերահսկողության հմտությունները:

Ֆինանսական տնօրենների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. իր ենթակայության տակ գտնվող բաժնի աշխատանքները ղեկավարելը, ընկերության ընդհանուր ֆինանսական քաղաքականության, ընկերության բյուջեի պլանավորման, ծախսերի և ներքին ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու լինելը, ընկերության բաժնետերերին իր պատասխանատվության տակ գտնվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովելը, ընկերության պահանջներին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ մշակելը, ծախսերի կառուցվածքի հիման վրա արտադրության շահութաբերության աստիճանի վերլուծությունը, ֆինանսական/տնտեսական հետազոտություններ իրականացնելը և վերլուծական հաշվետվություններ պատրաստելը, ընկերության ղեկավարներին ընկերության ֆինանսական դրության, դրա հետագա փոփոխութ-

յունների միտումների, ֆինանսական գործառնությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը, ընկերության հաշվապահական հաշվետվությունների ճշգրիտ վարման, ինչպես նաև անհրաժեշտ հաշվապահական հաշվետվությունների և փաստաթղթերի պատրաստման համար պատասխանատու լինելը, ընկերության հաշվապահական հաշվառման վարումը կազմակերպելը և վերահսկելը, ընկերության ֆինանսական հոսքերը կառավարելը, ընկերության կողմից իրականացվող գործարքների ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպելը կամ կատարելը, ֆինանսական և հարկային հաշվետվությունների ժամանակին և պատշաճ կազմմանն ու ներկայացմանը հետևելը, դրամական հոսքերի, կապիտալ և գործառնական ծախսերի վերահսկողությունը, բանկերի և վարկային կազմակերպությունների հետ աշխատանքը, եկամուտների և ծախսերի վերլուծության ապահովումը, ընկերության ռազմավարական նպատակների ձևակերպման և իրականացման գործընթացների վերլուծությունը և ռիսկերի գնահատումը:

Գործատուների հայտարարություններում վարկային մասնագետների թափուր աշխատատեղերի տեսակարար կշիռը կազմել է 36%: Գործատուները հիմնականում որոնել են վարկային մասնագետ, խոշոր վարկերի տրամադրման բաժնի մասնագետ, վարկային գործակալ, միկրովարկավորման բլոկի վարկային մասնագետ, խնդրահարույց վարկերի մասնագետ, վարկ-ավանդային բաժնի առևտրային վարկերի գծով մասնագետ, սպառողական վարկավորման գծով գործակալ, հաճախորդների խորհրդատու վարկային կազմակերպությունում:

Աշխատաշուկայում վարկային մասնագետների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. համակարգչային հմտությունները և հատկապես՝ MS Word, MS Excel ՀԾ-բանկ 4.0 ծրագրերի իմացությունը, ՀՀ բանկային օրենսդրության, «Սնանկության մասին» «Հրապարակային սակարկությունների մասին» «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքների իմացությունը, ֆինանսական և վիճակագրական տվյալներ վերլուծելու ունակությունները, վարկառուների բիզնեսի

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

ֆինանսա-տնտեսագիտական վերլուծության սկզբունքների և մեթոդաբանության իմացությունը, վարկառուների վարկունակության վերլուծության իրականացման մեթոդների իմացությունը, տնտեսվարող սուբյեկտների հարկման և հաշվապահական հաշվառման հիմունքների իմացությունը, ատիպիկ վարկային գործարքների ինքնուրույն վերլուծության և լուծումներ առաջարկելու ունակությունը, հաղորդակցման, հաճախորդների ներգրավման և վաճառքների իրականացման բանակցություններ վարելու, թիմում աշխատելու հմտությունները, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակությունը, նախաձեռնողականությունը, պատասխանատվության զգացումը, վերլուծական և գործնական ճկուն մտածելակերպը, աշխատանքը հնարավորինս սեղմ ժամկետներում կատարելու ունակությունը և սթրեսային իրավիճակներում աշխատելու ունակությունը:

Վարկային մասնագետների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. հաճախորդներին վարկերի ձևակերպման անհրաժեշտ փաստաթղթերի, պայմանների և ժամկետների մասին խորհրդատվության իրականացումը, վարկային հայտերի ընդունումը և վերլուծությունը, վարկավորման համար պահանջվող փաստաթղթերի հավաքագրումը, վարկունակության գնահատումը, վարկառուի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության իրականացումը, գրավի առարկայի ընտրությունը և ուսումնասիրումը, սահմանված ժամկետներում հաշվետվություններ պատրաստելը և ներկայացնելը, հաճախորդների վճարումներին հետևելը՝ դրանք ժամանակին և ճշգրիտ կատարելու նկատառումով, խնդրահարույց վարկերի գծով հաճախորդների հետ աշխատանքներ իրականացնելը, անհրաժեշտ փաստաթղթեր և հաշվետություններ պատրաստելը և ներկայացնելը, վարկերի ընթացիկ հսկողություն իրականացնելը և վարկերի մարման գործընթացը վերահսկելը:

Ֆինանսների մասնագետների բնագավառում գործատուների աշխատանքի առաջարկություններում վերջին խոշոր մասնագիտացումը հանդիսանում է

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

ֆինանսական վերլուծաբանի հաստիքը, որի ռտեսակարար կշիռն այս կատեգորիայի աշխատանքի առաջարկում կազմում է շուրջ 14%:

Աշխատաշուկայում ֆինանսական վերլուծաբանների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. քանակական և որակական վերլուծություններ իրականացնելու ունակությունը, MS Office և ՀԾ փաթեթների գերազանց իմացությունը, ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ հստակ պարկերացման առկայությունը, նախագծերի կառավարման մեթոդներին վերաբերյալ գիտելիքները և դրանք գործնականում կիրառելու փորձառությունը, բիզնես քեյսերի պատրաստման և վերլուծության փորձառությունը, առաջնորդելու և ուղղորդելու ունակությունը, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակությունը, որոշումներ կայացնելու և օպտիմալ լուծումներ առաջարկելու ունակությունը, մարդկանց հետ շփվելու, բանակցություններ վարելու միջանձնային հմտությունները, հաղորդակցության գրավոր և բանավոր գերազանց հմտությունները, կազմակերպչական, ժամանակի կառավարման և վերջնաժամկետների պահպանման հմտությունները, սթրեսային իրավիճակներում աշխատելու ունակությունը, նախաձեռնողականությունը, ինքնուրույն և թիմում աշխատելու կարողությունը, գերազանց վերլուծականան մտածողությունը, պրեզենտացիոն և հաշվետվողականության հմտությունները:

Ֆինանսական վերլուծավանների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. ընկերության բիզնես-գործընթացները վերլուծելը և մոդելավորելը, դրանց հիման վրա ֆունկցիոնալ վերլուծություն կատարելը, կոնկրետ զարգացման պրոյեկտների մշակման, իրականացման, ինչպես նաև դրանց կառավարման և վերահսկման գործընթացին մասնակցությունը, ռազմավարական, տակտիկական և գործառնական պլանների մշակման, կազմակերպման, իրակա-նացման և վերլուծության նախաձեռնումը, բարելավման կամ փոփոխման կարիք ունեցող կոնկրետ ոլորտները և ուղղությունները բացահայտելը, բացահայտված

խնդիրներին օպտիմալ լուծումներ տալը՝ օգտագործելով համակարգչային գործիքներ (համակարգային հետազոտություններ և մանրամասն վերլուծություններ անելու նպատակով), առկա տվյալները, փաստաթղթերը, հարցումները վերլուծելը և այդ հետազոտությունների միջոցով խնդրի օպտիմալ լուծման նպատակով գործողություն-ներ նախանշելը, նախագծերի զարգացման ընթացքը օբյեկտիվ վերլուծական տվյալ-ներով հիմնավոր կերպով գնահատելը և գործողությունների հաջորդականության արդ-յունավետ պլան կառուցելը, ապագայում ակնկալվող փոփոխությունների, պահանջների և խնդիրների վերաբերյալ կանխատեսումներ կատարելը՝ հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածի դինամիկան և կատարվող փոփոխությունները, կազմակերպության արտաքին և ներքին ռիսկերը բացահայտելը և կառավարելը, ռիսկերը մինիմալի հասցնելու և տարբեր իրավիճակներից արդյունավետ ելքեր գտնելու նպատակով կոնկրետ միջոցներ ձեռնարկելը, բիզնես գործընթացների որակը բարելավելուն միտված ստանդարտներ մշակելը, ապահովված վաճառքների ցուցանիշները վերլուծելը և դրանց հիման վրա համապատասխան հաշվետվություններ մշակելը՝ ներառելով բարելավման առաջարկություններ, կազմակերպության ղեկավարությանը որոշումների կայացման (մասնավորապես, գնագոյացման, առաջմղման ակցիաների կազմակերպման) հարցում աջակցելը, պահանջի դեպքում այլ կառավարչական և ֆինանսական վերլուծություններ իրականացնելը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Գործատուների աշխատանքի առաջարկում կառավարման բնագավառի մասնագետների շրջանակը ներառել է մենեջերների և մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետների հաստիքները: Իբրև մենեջերի հաստիքներ գործատուները առավել հաճախ դիտարկել են օֆիս-մենեջերի, նախագծերի կառավարչի և մենեջեր-կազմակերպիչի հաստիքները:



Աշխատանքի այն հայտարարություն-ներում, որտեղ հնարավոր է եղել պարզել կազմակերպության գործունեության ոլորտը, մենեջերների պահանջարկի ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել են մանրածախ առևտրի ոլորտի ընկե-րությունները (21%): Վերջինիս հաջորդում են հյուրանոցային, ռեստորանային բիզնեսը և ոչ առևտրային կազմակերպությունների ոլորտը (13.8%), SS ոլորտը (12.6%), բանկերն ու վարկային կազմակերպությունները (10.3%): Աշխատանքի առաջարկում համեմատաբար ավելի փոքր տեսակարար կշիռ են ունեցել արտադրական կազմակերպությունները (8%), բիզնես ծառայություններ և խորհրդատվություն մատուցող ընկերությունները (5.7%) և ներմուծող կազմա-կերպությունները (5.7%) և շինարարականն ընկերությունները (4.6%): Զբոսաշրջության, հեռահաղորդակցության և կապի ընկերությունների տեսակարար կշիռն ամենափոքրն է եղել (համապատասխանաբար՝ 1.1% և 2.3%):

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



Կառավարման բնագավառում առկա աշխատանքի հայտարարությունների 67%-ում սահմանվել է բարձրագույն կրթության պահանջ: Սակայն ի տարբերություն ֆինանսների և մարքեթինգի մասնագետների՝ կառավարման բնագավառում բարձրագույն մասնագիտական կրթության պահանջը ավելի փոքր տեսակարար կշիռ է ունեցել ընդհանուր հայտարարությունների թվում: Աշխատանքի առաջարկի հայտարարությունների 53%-ում պահանջվել է բարձրագույն կրթություն՝ առանց ոլորտի հստակեցման և 40%-ում պահանջվել է բարձրագույն մասնագիտական կրթություն: Եվս 7%-ում պահանջվել է բարձրագույն տնտեսագիտական կրթություն:



Դիտարկված հայտարարությունների 45%-ում կառավարման բնագավառի մասնագետների նկատմամբ աշխատանքային փորձառության առկայության պարտադիր պահանջ չի դրվել: Աշխատանքային փորձառության պահանջ ներառող հայտարարությունների 33%-ում պահանջվել է նվազագույնը 1 տարվա, 25%-ում՝ նվազագույնը 2, 19%-ում՝ նվազագույնը 3 և 23%-ում՝ նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձի առկայություն:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



Ինչպես և մյուս մասնագիտությունների դեպքում, կառավարման բնագավառի աշխատանքի հայտարարություններում ամենամեծ տեսակարար կշիռն ունի անգլերեն և ռուսերեն լեզուների միաժամանակյա պարտադիր իմացության պահանջը (55%): Վերջինիս հաջորդում է միայն անգլերենի (18%) կամ միայն ռուսերենի (11%) իմացության պահանջը: Այլ օտար լեզուների տիրապետելու պահանջների տեսակարար կշիռն անհամեմատ փոքր է:



Կառավարման բնագավառի մասնագիտությունների աշխատանքի առաջարկում համակարգչային հմտություններին ներկայացվող պահանջների շարքում ամենամեծ տեսակարար կշիռն ունի MS Office փաթեթի իմացությունը (54%), որին հաջորդում են ընդհանուր համակարգչային հմտությունները (26%):

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



1 Մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողություն
2 Ժամանակի կառավարման հմտություններ, սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն
3Վերլուծական մտածողություն, խնդիրները հայտնաբերելու, ոչ ստանդարտ, լուծումներ առաջարկելու և արագորոշումներ ընդունելու կարողություն
4 Պլանավորման,կազմակերպչական հմտություններ և հաշվետվողականության
5 Բանակցային հմտություններ
6 Ղեկավարման հմտություններ, առաջնորդի հատկանիշներ
7 Սթրեսային իրավիճակներում աշխատելու հմտություն
8 ՀՀ բանկային օրենսդրության, ԿԲ կանոնակարգերի իմացություն
9 Պրեզենտացիոն հմտություններ
10 Վաճառքի հմտություններ
11 ՀՀ աշխատանքային օրենսդրության իմացություն
12 Օնլայն մարքեթինգի բազային գիտելիքներ
13Այլ

Կառավարման բնագավառի մասնագետներին ամենահաջախ ներկայացվող պահանջը հանդիսացել է մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողությունը: Մեծ է նաև ժամանակի կառավարման ունակությունների, սեղմ ժամկետներում աշխատելու կարողության, վերլուծական մտածողություն, խնդիրներ հայտնաբերելու, ոչ ստանդարտ լուծումներ առաջարկելու և արագ կողմնորոշվելու կարողությանպահանջի տեսակարար կշիռը: Սրանց հաջորդում են պլանավորման և կազմակերպչական հմտությունների, հաշվետվողականության, բանակցային, ղեկավարման հմտություն-ների ու առաջնորդի հատկանիշների առկայության պահանջի տեսակարար կշիռը: Իբրև լրացուցիչ պահանջներ գործատուների կողմից ներկայացվել են նաև աշխա-տավարձերի վճարման ձևերի ու համակարգերի, կադրային փաստաթղթերի վարման

ստանդարտների իմացությունը, կոնֆլիկտային իրավիճակները շտկելու, թիմերի կառուցման, մոտիվացման, աշխատանքի մեջ ներգրավելու ունակությունները:



1 Սպառողների և գործընկերների հետ շփում և կապի պահպանում
2 Հաշվետվությունների կազմում և ներկայացում
3 Կադրային գործընթացների և բարեփոխումների իրականացում
4 Աշխատակազմի ղեկավարում և վերահսկում
5 Պլանավորման և ռազմավարության մշակմանն ուղղված աշխատանքներ
6 Շուկայի հետազոտություն, անհրաժեշտ տեղեկատվության հավաքում
7 Աշխատակիցների անխափան աշխատանքի ապահովում
8 Բանակցությունների վարում, նոր գործընկերների ներգրավում
9 Թարգմանչական աշխատանքների իրականացում
10 Վարչական գործառույթների իրականացում

Կառավարման բնագավառի աշխատանքի առաջարկություններում գործատուներն իբրև կառավարման մասնագետի աշխատանքային հիմնական պարտականություններ առավելապես մատնանշել են՝ սպառողների և գործընկերների հետ շփումը, հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը, կադրային գործընթացների և բարեփոխումների իրականացումը, աշխատակազմի ղեկավարամումն ու վերահսկումը Համեմատաբար փոքր տեսակարար կշիռ են ունեցել շուկայի հետազոտության և այդ նպատակով տեղեկատվության հավաքման, աշխատակիցների անխափան աշխա-տանքի ապահովման, բանակցությունների վարման ու նոր գործընկերների ներգրավման և վարչական գործառույթների իրականացման պարտականությունները:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

Աշխատաշուկայում մենեջերների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. հայերենի, ռուսերենի և անգլերենի գերազանց իմացությունը, համակարգչային գիտելիքների առկայությունը, պատասխանատվության զգացումը, հաշվետվություններ կազմելու հմտությունները, լարված և կոնֆլիկտային իրավիճակներում կողմնորոշվելու ունակությունը, հաճախորդների և գործընկեր կազմակերպությունների հետ շփվելու և բանակցելու ունակությունը, ուղորդման ունակությունը և կազմակերպչական հմտությունները, արագ կողմնորոշվելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակությունը, մտքի և վարքի ճկունությունը, կազմակերպչական հմտությունները, նախագծերի կառավարման մեթոդաբանությունների իմացությունը, թիմերի կառուցման, մոտիվացման, առաջնորդման և աշխատանքի մեջ ներգրավելու ունակությունը:

Մենեջերի աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. աշխատակիցների սպասարկման որակին հետևելը, աշխատակիցների անվտանգ և անթերի աշխատանքն ապահովելը, աշխատանքային անվտանգության կանոնների պահպանմանը հետևելը, արտադրական առաջադրանքների և պլանների կատարման ընթացքն ապահովելը, աշխատողների համար աշխատանքային գրաֆիկներ սահմանելը և անձնակազմի ծանրաբեռնվածությանը համապատասխան հանձնարարականներ սահմանելը, սահմանված ժամկետում հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, գրասենյակային գործի կազմակերպելը:

Գործատուների հայտարարություններում անձնակազմի կառավարման մասնագետների թափուր աշխատատեղերն առաջարվել են HR մենեջերի, մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետի, կադրերի բաժնի աշխատակցի և կադրերի մասնագետի հաստիքներով:

Աշխատաշուկայում անձնակազմի կառավարման մասնագետների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. մարդկային ռեսուրսների համակարգի և բազաների իմացությունը, ռազմավարության ծրագրավորման և առաջնորդության

կարողությունը, լսելու, հաղորդակցվելու և ներկայացուցչական ձիրքը, կազմակերպության ներսում միջանձնային հարաբերությունների կառուցման և կառավարման ձիրքը, աշխատանքային իրավունքի եւ մարդկային ռեսուրսների բնագավառում խորը գիտելիքները, հայերենի,անգլերենի և ռուսերենի գերազանց իմացությունը, ՀՀ աշխատանքային օրենսդրության և հարակից այլ օրենքների լավ իմացությունը, միջանձնային հարաբերությունների և շփման գերազանց հմտությունները, համակարգչային ծրագրերի իմացությունը (MS Office, ՀԾ–կադրեր և հաշվապահություն):

Մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. աշխատանքի հայտարարությունների համակարգումը, աշխատանքի հայտատուների անձնական թերթերի (ռեզյում) վերլուծությունը, ընտրված թեկնածուների հետ փուլային հարցազրույցների իրականացումը, նոր աշխատողներին կազմակերպության ռազմավարության, օրենքների և ներքին կարգերի վերաբերյալ տեղեկացնելը՝ ներգրավելով աշխատանքային գործընթացին, կադրային հաշվառում վարելը, աշխատողների վերաբերյալ գրառումների մատյան պահելը, աշխատանքի ցուցանիշները վերահսկելը, մարդկային ռեսուրսների բազաները թարմացնելը, աշխատավարձերի հաշվառման աշխատանքներին աջակցելը՝ տրամադրելով համապատասխան տվյալներ աշխատողների բացակայությունների, պարգևատրումների և հեռացումների վերաբերյալ, վճարման գործընթացին և պարգևավճարների ծրագրերին հետևելը, ներքին և արտաքին հաղորդակցության գործընթացին հետևելու նպատակով հաշվետվություններ և ներկայացչուչական գրառումներ պատրաստելը, մարդկային ռեսուրսների աճին նպաստող նախագծերը, հանդիպումները և վերապատրաստման դասընթացները համակարգելը, մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարություններ եւ նախաձեռնություններ մշակելը՝ համապատասխանեցնելով ընդհանուր բիզնեսի կառավարման գործընթացին, մարդկային ռեսուրսների կառավարմանն աջակցելը կարգապահական եւ բողոքարկման հարցերով, դրական աշխատանքային

միջավայր ձևավորելը, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ընթացակարգեր մշակելը, թարմացնելը և ներդնելը, աշխատակիցների կատարողականի գնահատումը՝ և աշխատակիցներին՝ հաստատված ընթացակարգին համապատասխան, կատարողականի գնահատման արդյունքները տրամադրելը, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնին առնչվող բոլոր տեսակի փաստաթղթերի, այդ թվում՝ հրամանների, պայմանագրերի, համաձայնագրերի և տեղեկանքների ժամանակին և ճշգրիտ կազմման գործընթացը վերահսկելը, կազմակերպության աշխատակիցների անձնական փաստաթղթերի պահպանումը վերահսկելը, աշխատանքային գործընթացների բարելավման և իրականացվող գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ պարբերաբար առաջարկություններ ներկայացնելը, աշխատակիցներին աջակցելը ՝ հարցերի և խնդիրների առաջացման դեպքում, ներքին և արտաքին հաշվետվություններ կազմելը և տրամադրելը, աշխատակիցների համար սոցիալական փաթեթներ մշակելը:

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործատուների հայտարարությունների շուրջ 18%-ը բաժին է ընկել հաշվապահական հաշվառման և հարկման բնագավառին, որտեղ ըստ որոնվող կադրերի մասնագիտացումների առանձնացվել են կառավարչական հաշվառման (և աուդիտի) և հաշվապահական հաշվառման մասնագետները: Ըստ հայտարարությունների տեսակարար կշռի գործատուների շուրջ 30%-ը որոնել է կառավարչական հաշվառման մասնագետների կամ աուդիտորների, իսկ 70%-ը հաշվապահական հաշվառման բնագավառի մասնագետների (գլխավոր հաշվապահ, հաշվապահ, հաշվետար և այլն):



Կառավարչական հաշվառման մասնագետների աշխատանքի ընդունման հայտարարություններում բարձրագույն մասնագիտական կրթության պահանջը ամենամեծ տեսակարար կշիռն ունի 60%: Վերջինիս հետևում են բարձրագույն (30%) և բարձրագույն տնտեսագիտական (10%) կրթության պարտադիր պահանջը: Ընդ որում այս մասնագիտացման պարագայում բարձրագույն կրթության առկայությունը (անկախ մասնագիտությունից) պարտադիր պահանջ է բորոլոր գործատուների համար:







Կառավարչական հաշվառման և աուդիտի մասնագետների փորձառությանը առումով առավել մեծ տեսակարար կշիռ ունեն նվազագույնը 2-3 տարվա (համապատասխանաբար՝ 50% և 39%) աշխատանքային փորձի առկայությունը: Ավելի փոքր կշիռ ունի նվազագույնը 1 և 5 տարիների աշխատանքային փորձառության պահանջը:

Կառավարչական հաշվառման և աուդիտի մասնագետների լեզվական իմացության պահանջ դրվել է աշխատատեղերի հայտարարությունների միայն 57%-ում: է Դիտարկված հայտարարությունների 54%-ում պահանջվել է անգլերենի և ռուսերենի պարտադիր իմացություն: Անգլերենի պարտադիր իմացություն պահանջվել է 46%-ում:

Կառավարչական հաշվառման և աուդիտի մասնագետներին ներկայացվող համակարգչային հմտությունների վերաբերյալ պահանջների շարքում գերակշռող է MS Office-ի իմացությունը (75%): Վերջինիս հետևում է ՀԾ (18%) և 1C (3%) ծրագրային փաթեթների տիրապետման պահանջը: Համակարգչային ընդհանուր գիտելիքների առկայություն պահանջել են գործադուների շուրջ 4%-ը:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



1 Վերլուծական մտածողություն, խնդիրները հայտնաբերելու, ոչ ստանդարտ, լուծումներ առաջարկելու և արագորոշումներ ընդունելու կարողություն
2 Մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողություն
3 Պլանավորման, կազմակերպչական հմտություններ և հաշվետվողականություն
4 Ժամանակի կառավարման հմտություններ, սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն
Բանակցային հմտություններ
5 Սթրեսային իրավիճակներում աշխատելու ունակություն
6 Բիզնես վերլուծության մեթոդոլոգիայի և սկզբունքների իմացություն

7 Բանակցային հմտություններ
8 Պրեզենտացիոն հմտություններ
9 Ղեկավարման հմտություններ, առաջնորդի հատկանիշներ
10 ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ իմացություն
11 ՀՀ բանկային օրենսդրության, ԿԲ կանոնակարգերի իմացություն
12 Այլ

Կառավարչական հաշվառման և աուդտի մասնագետների հմտությունների առումով գործատուները առավել կարևորվել են վերլուծական մտածողությունը, խնդիրները հայտնաբերելու, ոչ ստանդարտ լուծումներ առաջարկելու և արագ որոշումներ ընդունելու կարողությունը մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողությունը, պլանավորման, կազմակերպչական հմտություններն ու հաշվետվողականությունը, ժամանակի կառավարման հմտությունները, սեղմ ժամկետներում աշխատելու կարողությունը, սթրեսային պայմաններում աշխատելու կարողությունը, բիզնես վերլուծության մեթոդների և սկզբունքների իմացությունը, ՀՀ հարկային ու բանկային օրենսդրության իմացությունը, ՖՀՄՍ իմացությունն ու ՀՀ ԿԲ կանոնակարգերի իմացությունը, բանակցային և պրեզենտացիոն հմտությունների, ինչպես նաև զեկավարման հմտությունների ու առաջնորդի հատկանիշների առկայությունը: Բացի սրանից գործատուները կառավարչական հաշվառման և

աուդիտի մասնագետներից պահանջել են նաև IFRS, IAS կամ ISA ստանդարտների իմացություն, ՀԾ գերազանց իմացություն, ACCA սերտիֆիկատի առկայություն, միջազգային ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքների և մեթոդաբանության իմացություն և առաջադրանքներն անկախ ու ինքնուրույն կատարելու ունակություն:



1 Ֆինանսական հաշվետվությունների հավաստիության ստուգում և վերլուծություն
2 Հաշվետվությունների կազմում և ներկայացում
3 Ֆինանսական վերլուծությունների իրականացում
4 Առաջարկություններիկազմում անեներկայացում
5 Շուկայի հետազոտություն նպատակով անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքում
6 Պլանավորման և ռազմավարության մշակմանն ուղղված աշխատանքներ
7 Վարչական գործառույթների իրականացում

Կառավարչական հաշվառման և աուդիտի մասնագետների աշխատանքային հիմնական պարտականությունների մեջ առավել հաճախ գործատուները մատնանշել են՝ ֆինանսական հաշվետվությունների հավաստիության ստուգումն ու վերլուծությունը, հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը, ֆինանսական վերլուծությունների իրականացումը դրա հիման վրա առաջարկությունների կազմումն ու ներկայացումը, շուկայի վերլուծության նպատակով տվյալների հավաքագրումը, պլանավորման և ռազմավարության մշակմանն ուղղված աշխատանքների իրականացումը, ինչպես նաև վարչական գործառույթների իրականացումը: Ի հավելումն նշվածների, թափուր աշխատատեղերի հայտարարություններում, որպես կառավարչական հաշվառման կամ

աուդիտի մասնագետի աշխատանքային պարտականություն, առավել փոքր տեսակարար կշռով, մատնանշվել են նաև հետևյալ պարտականությունները. ընկերության առանձին ոլորտներին առընչվող գործընթացների վերլուծություն, ընկերության բիզնես-գործընթացների՝ ներքին և արտաքին կարգերին և օրենքներին համապատասխանելիության ստուգումների իրականացում, տվյալների բազաների հիման վրա վերլուծությունների իրականացում, գործառնական և այլ ռիսկերի բացահայտում և դրանց վերացման, զսպման ու նվազեցման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում, խորհրդատվության տրամադրում, հետստուգման աշխատանքների և մոնիթորինգների իրականացում, խարդախության դեպքերի ուսումնասիրության իրականացում, դրանց պատճառահետևանքային կապերի և ներքին հսկողական համակարգի թերի կողմերի բացահայտում, իր վերահսկողական գործառույթների արդյունքում ի հայտ եկած խախտումների, անհամապատասխանությունների վերաբերյալ եզրահանգումներ և լուծման ուղիների առաջարկություններ պարունակող հաշվետվությունների մշակում և ներկայացում:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվապահական հաշվառման մասնագետների խմբում գործատուները դիտարկել են հաշվապահի (ներառյալ գլխավոր հաշվապահի), հաշվետարի և գանձապահի մասնագիտացումները (հաստիքները):



Գործատուների աշխատանքի առաջարկի 59%-ում որոնվել են հաշվապահներ, 26%-ում՝ հաշվետարներ և 15%-ում գանձապահներ: Հաշվի առնելով, որ հաշվետարի ու գանձապահի հաստիքները, ըստ ՀՀ զբաղ-մունքների դասակարգչի չեն պահանջում բարձրագույն կրթություն (դրա համար պահանջվում է կրթության 5-րդ մակարդակի առկայություն) և գործատուներն իրենք էլ նման պահանջ հիմնականում չեն դրել, սույն հաշվետվության շրջանակներում ընդհանուրից առանձնացված կներկայացվեն միայն հաշվապահների և գլխավոր հաշվապահների ունակությունների նկատմամբ ներ-կայացվող պահանջները:



Դիտարկված թափուր աշխատատեղերի հայտարարություններից բարձրագույն կրթության առկայության պահանջ դրվել է մոտ 50%-ում միայն, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշվապահական հաշվառում կատեգորիայի մեջ ներառվել է նաև հաշվետարների և գանձապահների աշխատանքի առաջարկը, ում նկատմամբ բարձրագույն կրթությունը պարտադիր պահանջ չէ: Բարձրագույն կրթության

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

պահանջով հայտարարությունների 65%-ում առկա է եղել բարձրագույն մասնագիտական կրթության պահանջ, 33%-ում բարձրագույն, իսկ 2%-ում բարձրագույն տնտեսագիտական կրթության պահանջ:



Դիտարկված հայտարարություններից միայն 62%-ում է նշվել աշխատանքային փորձի պարտադիր պահանջ: Փորձառություն պահանջող հայտարարություններում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն նվազագույնը 1 տարվա աշխատանքային փորձի առկայությունը (50%): Վերջինիս հետևում են նվազագույնը 3 և 5 տարվա փորձառության պահանջը (համապատասխանաբար՝ 21% և19%) տարիների աշխատանքային փորձի պահանջը:



Օտար լեզուների իմացության պահանջ հաշվապահների պարագայում ներկայացրել են գործատուների շուրջ 25%-ը: Սա կրկին կապված է նրա հետ, որ այս կատեգորիայում ներառված են գանձապահների և հաշվետարերի հաստիքները, որոնց նկատմամբ լեզվի իմացության պահանջ չի դրվում: Ընդ որում հաշվապահների առումով ևս լեզվի իմացության պահանջ դրել են միայն գործատուների շուրջ 50%-ը: Օտար լեզուների իմացություն պահանջող աշխատանքի հայտարարություններում գերակշռում է անգլերենի և ռուսերենի միաժամանակյա պարտադիր իմացությունը (51%), պարտադիր անգլերենի (20%) և պարտադիր ռուսերենի իմացությունը (17%):

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս



Հաշվապահական հաշվառման մասնագետներին առաջադրված համակարգչային հմտությունների առկայության կեսից ավելին վերաբերում է մասնագիտական ծրագրերի՝ ՀԾ(28%) և 1C (24%) իմացությանը: Մեծ տեսակարար կշիռ ունի նաև MS Office փաթեթի իմացությունը (35%): Համեմատաբար ավելի փոքր տեսակարար կշիռ ունեն ընդհանուր համակարգչային հմտությունների առկայության (5%) և այլ ծրագրերի իմացության պահանջները (8%):



1 ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ իմացություն
2 Մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողություն
3 Վերլուծական մտածողություն, խնդիրները հայտնաբերելու, ոչ ստանդարտ, լուծումներ առաջարկելու և արագորոշումներ ընդունելու կարողություն
4 Սթրեսային իրավիճակներում աշխատելու հմտություն
5 Ղեկավարման հմտություններ, առաջնորդի հատկանիշներ
6 Պլանավորման,կազմակերպչական հմտություններ և հաշվետվողականություն
7 Բանակցային հմտություններ
8 Ժամանակի կառավարման հմտություններ, սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն
9 Վաճառքի հմտություններ
10 ՀՀ բանկային օրենսդրության, ԿԲ կանոնակարգերի իմացություն
11 Պրեզենտացիոն հմտություններ
12 ՀՀ աշխատանքային օրենսդրության իմացություն
13 Բիզնես վերլուծության մեթոդոլոգիայի և սկզբունքների իմացություն
14 Այլ

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

Հաշվապահական հաշվառման բնագավառի մասնագետների հմտություններն գործատուների կողմից ներկայացվող պահանջների թվում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն. ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ իմացությունը, մարդկանց հետ շփվելու, թիմում աշխատելու կարողությունը, վերլուծական մտածողությունը, խնդիրներ հայտնաբերելու, ոչ ստանդարտ լուծումներ առաջարկելու և արագ կողմնորոշվելու կարողությունը, պլանավորման ու կազմակերպչական հմտություններ և հաշվետվողականությանը: Հաճախ ներկայացվող պահանջներից են նաև բանակցային հմտությունների առկայությունը, ժամանակի կառավարման և սեղմ ժամկետներում աշխատելու ունակությունը, ՀՀ բանկային և աշխատանքային օրենսդրության, ինչպես նաև ԿԲ կանոնակարգերի իմացությունը, պրեզենտացիոն ունակությունները և բիզնես վերլուծություն իրականացնելու մեթոդների ու սկզբունքների իմացությունը:



1 աշխատանք սկզբնական փաստաթղթերի հետ
2 հարկային,վիճակագրական և այլ պարտադիր հաշվետվությունների կազմում և ներկայացում
3 դեբիտորական և կրեդիտորական պարտքի վերահսկում
4 ֆինանսական վերլուծությունների իրականացում
5 պայմանագրերի կնքում
6 ֆինանսական հաշվետվությունների կազմում

Հաշվապահների աշխատանքային պարտականությունների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն սկզբնական փաստաթղթերի հետ աշխատանքը և հարկային, վիճակագրական ու այլ պարտադիր հաշվետվությունների կազմումն ու

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

ներկայացումը: Որոշակի թվով գործատուներ իբրև աշխատանքային պարտականություններ մատնանշել են նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքի վերահսկումը, ֆինանսական վերլուծությունների իրականացումը, պայմանագրերի կնքումը և ֆինանսական այլ հաշվետվությունների կազմումը: Հաշվապահական հաշվառման բնագավառի մասնագիտությունների առաջարկում հաշվապահների կշիռը կազմում է 59%:

Աշխատաշուկայում հաշվապահների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. հայերենի,ռուսերենի և անգլրենի իմացությունը, համակարգչային գերազանց հմտությունները (MS Office, ՀԾ, 1C), ՀՀ գործող օրենքների և հաշվապահական հաշվառման ստանդարտների իմացությունը, պլանավորման ունակությունը, հինանսական վերլուծություն կատարելու ունակությունը, պատասխանատվությունը, պարտաճանաչությունը, կարգապահությունը (մասնագիտա-կան էթիկան):

Հաշվապահների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. հաշվապահական հաշվառման վարումը, հարկային, վիճակագրական և այլ պարտադիր հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը, հաշվապահական փաստաթղթերի կազմումը և փաստաթղթաշրջանառության վարումը, հաշիվ-ապրանքագրերի համակարգչային ծրագիր ներմուծումը համակարգումը և արխի-վացումը, E-invoicing ծրագրով հարկային հաշիվների դուրսգրումը: ընկերության գոր-ծունեության ընթացքում ՀՀ հարկային և աշխատանքային օրենսդրության, ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների ու այլ իրավական ակտերի պահանջների ապահովումը, հարկային ռիսկերի գնահատումը և կանխարգելումը, բանկերի հետ համագործակցության ապահովումը, բանկային հաշիվների ամենօրյա վերահսկումը և ձևակերպումը, 1C և ՀԾ ծրագրերով ընթացիկ աշխատանքը:

Հաշվապահների թափուր հաստիքների առաջարկում ղեկավար պաշտոնների տեսակարար կշիռը կազմում է 29%: Իբրև ղեկավար պաշտոնի գործատուները հիմնականում դիտարկել են գլխավոր հաշվապահի հաստիքը:

Աշխատաշուկայում գլխավոր հաշվապահների հմտություններին ներկայացվող հիմնական պահանջներն են. համակարգչային ծրագրերի գերազանց իմացությունը (MS Word, MS Excel, ՀԾ և 1C ծրագրերի փաթեթներ), հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների իմացությունը (վերջինը իբրև ցանկալի սակայն ոչ պարտադիր պահանջ), համապատասխան օրենսդրության իմացությունտ, տրամաբանելու, վերլուծելու կարողությունը, հաշվապահական ստանդարտների պարտադիր իմացությունը, աշխատանքների կազմակերպման, վերահսկման և բանակցելու հմտությունները:

Գլխավոր հաշվապահների աշխատանքային հիմնական պարտականություններն են հանդիսանում. հաշվապահական հաշվառման վարումը, հարկային, վիճակագրական և այլ պարտադիր հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը, սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստումը և ընդունումը, ներքին հաշվապահական հաշվետվության փաստաթղթերի ձևերի մշակման, ինչպես նաև գույքագրման կարգի ապահովման, տնտեսական գործառնությունների անցկացման նկատմամբ վերահսկողության սահմանումը, հաշվապահական տեղեկատվության վերամշակման տեխնոլոգիաների ապահովման և փաստաթղթաշրջանառության կարգի հետ կապված աշխատանքների իրականացումը, կադրերի հետ կապված փաստաթղթերի կազմումը և վերահսկումը, իրավական ակտերի ինքնուրույն կազմումը և դրանք ՀՀ պետական գերատեսչությունների հետ համաձայնեցման ապահովումը, կազմակերպության գործունեության, նրա գույքային վիճակի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ ամբողջական և հավաստի հաշվապահական տեղեկատվության ձևավորման աշխատանքներին մասնակցությունը, դրամական միջոցների հաշվառման ապահովումը, դրանց շարժի հետ կապված գործառ-

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

նությունների ժամանակին արտացոլումը հաշվապահական հաշվառման հաշիվներում, հաշվապահության ստորաբաժանման աշխատակիցներին մեթոդական օգնության ցուցաբերումը, կազմակերպության ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպմանն առընչվող ընթացակարգերի մշակման ու ներդրման աշխատանքներին մասնակցությունը, ֆինանսական շրջանառության վերահսկողությունը, վերլուծությունը, կազմակերպության բյուջեի պլանավորման և վերանայման աշխատանքների իրականացումը, գնումների բյուջետային վերահսկողությունը, կատարողական հաշվետվությունների պատրաստումը, տարաբնույթ վերլուծական աշխատանքների իրականացումը՝ ըստ պահանջի:

Գրիգորյան Արմեն
Քթոյան Արմեն
Խաչատրյան Անի
Հովհաննիսյան Աստղիկ
ՆերսիսյանԱրուս

ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ

- Աշխատաշուկայում տնտեսագետների, կառավարման, ֆինանսների, հաշվապահական հաշվառման ու հարկման բնագավառի մասնագետների և շուկայագետների պահանջարկը կազմում է ընդհանուր գործատուների պահանջարկի շուրջ 15-16%-ը:
- ՀՊՏՀ թողարկած շրջանավարտների կտրվածքով ամենապահանջվածը աշխատաշուկայում մարքեթինգի և վաճառքի մասնագետներն են և հաշվապահական հաշվառման ու հարկման բնագավառի մասնագետները: Դրանց հաջորդում են կառավարման ու ֆինանսների բնագավառի մասնագետները:
- ՀՊՏՀ թողարկած մասնագիտությունների կտրվածքով աշխատաշուկայում առկա թափուր հաստիքներից միայն 64.6%-ում են գործատուները մատնանշել բարձրագույն կրթության կամ համապատասխան դիպլոմի առկայության պահանջ: Ընդ որում, բարձրագույն մասնագիտական կրթություն պահանջվել է բարձրագույն կրթություն պահանջող գործատուների միայն 52.7%-ը:
- Թափուր աշատեղերի հայտարարությունների 17%-ը ղեկավար պաշտոններ են, որոնք գերակշռել են կառավարման, ֆինանսների, մարքեթինգի և վաճառքի բնագավառների մասնագիտությունների մեջ:
- ՀՊՏՀ թողարկած մասնագիտությունների կտրվածքով առկա թափուր աշխատատեղերի հայտարարությունների 43.9%-ում աշխատաքային փորձի պարտադիր պահանջ չի դրվել: Այսինքն՝ գործատուների բավականին մեծ տոկոս պատրաստ է աշխատանքի ընդունել նաև աշխատանքային փորձ չունեցող մասնագետների:
- ՀՊՏՀ թողարկած մասնագիտությունների շրջանավարտներին աշխատաշուկայում ներկայացվում են ինչպես ընդհանրական, այնպես էլ մասնագիտական

որոշակի հմտությունների առկայության պահանջ: Ամենատարածված ակնկալվող ընդհանրական հմտություններն են լեզուների իմացությունը, համակարգչային համակարգչային հմտությունները (որոնք բացի ընդհանրական փաթեթներից յուրաքանչյուր մասնագիտության համար պահանջում են նաև դրան ներհատուկ ծրագրերի իմացությունհաղորդակցվելու, թիմում աշխատելու կարողությունը, վերլուծական և ստեղծագործ մտածողությունը, խնդիրներ հայտնաբերելու, ոչ ստանդարտ լուծումներ առաջարկելու և արագ կողմնորոշվելու կարողությունը, որոշումներ ընդունելու ունակությունը, պլանավորման, կազմակերպչական հմտություններն ու հաշվետվողականությունը, ղեկավարման հմտությունները, առաջնորդի հատկանիշները, պրեզենտացիոն ունակությունները, իրենց գործունեությունը կարգավորող իրավական դաշտի իմացությունը: